

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

30 հունվարի 2014թ.
ք.Երևան

թիվ 03-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22- ԵՎ 23-ԻՆ ՌԵՅԿՅԱՎԻԿՈՒՄ (ԻՍԼԱՆԴԻԱ) ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԷԹԻԿԱՅԻ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վիճակագրության առնչությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներին, վիճակագրի մասնագիտության յուրօրինակությունը, բացառապես վիճակագրության միջազգային ստանդարտներով գործելու հրամայականը, գիտակցելով վիճակագրի պատասխանատվությունը հանրության՝ սպառողների, ռեսպոնդենտների և այլ գործընկերների հանդեպ, անխուսափելի համարելով վիճակագրության և դրա արտադրանքի տարակերպ ընկալման հավանականությունը, ի նկատի ունենալով վիճակագրության նկատմամբ վստահության խոցելիությունը, նմանատիպ այլ գործոններով պայմանավորված ընդունելով վիճակագրության իրագործման բնագավառում պրոֆեսիոնալիզմի, էթիկայի և կոռեկտության պահպանման անհրաժեշտությունը, **Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.**

1. վիճակագրության բնագավառում պրոֆեսիոնալ արժեքները և փորձը ուղղորդելու նպատակով, իր գաղափարական համակարծությունն արտահայտել Միջազգային Վիճակագրական ինստիտուտի խորհրդի կողմից 2010 թվականի հուլիսի 22 և 23-ին Ռեյկյավիկում (Իսլանդիա) հաստատված [Պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրին](#) (այսուհետ՝ Հռչակագիր), և այն կիրառել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գործունեությունում.

2. առաջարկել Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական գործունեությամբ զբաղվող այլ սուբյեկտներին առաջնորդվել Հռչակագրով:

Նախագահ՝

Ս. Մնացականյան